



International Foundation  
for Electoral Systems



“AGATE” RIGHTS DEFENSE CENTER  
FOR WOMEN WITH DISABILITIES NGO



Coalition for Inclusive  
Legal Reforms

# Հարցազրույցներ ներառման մասին

**Խմբագիր՝ Անահիտ Սիմոնյան**  
**Լուսանկարները՝ Զառա Հարությունյանի**  
**Պատմությունները հավաքեցին՝ Անահիտ Սիմոնյանը,**  
**Զառա Հարությունյանը**



## Երկու խոսք նախագծի մասին

Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող ավելի քան 190000 մարդ: Սա նշանակում է 190000 պատմություն, որից յուրաքանչյուրի հերոսն ունի իր անցած ճանապարհը, իր պատմությունն այն մասին, թե ինչ խոչընդոտների և մարտահրավերների է բախվել մեր երկրում առկա միջավայրային արգելքների, Ժառայությունների անմատչելիության և տարբեր ոլորտներում մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության սկզբունքի վրա հիմնված մոտեցման բացակայության պատճառով:

Մինչ օրս այդ պատմությունները հիմնականում մնում են չբացահայտված, իսկ անհատների ձայնը՝ չլսված թե՛ որոշում կայացնողների և թե՛ հանրության լայն շերտերի համար: Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձի փորձառությունը պետք է բերվի հանրային դաշտ, դառնա այսօր Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի շուրջ ձևավորվող պատմության անբաժան մաս:

Այս նպատակին է Ժառայում Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի (ՆԻԲԿ) նախաձեռնած «Հարցազրույցներ ներառման մասին» նախագիծը: Հաշմանդամություն ունեցող անձանց փորձառության ներկայացումը առավել կարևոր է Հայաստանում այդ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում տեղի ունեցող բուռն գործընթացների համատեքստում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման գործընթացի շրջանակում:

Մենք լիահույս ենք, որ հարցազրույցների այս ժողովածուն իր խորքային ազդեցությունը կթողնի որոշում կայացնողների, հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքների և մերձավորների և, առհասարակ, հասարակության յուրաքանչյուր անդամի մոտեցումների վրա: Սույն ժողովածուի միջոցով ՆԻԲԿ-ը նպատակ է հետապնդում նպաստելու Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կարծրատիպերի, նրանց նկատմամբ խարանի ու խտրականության հաղթահարմանը՝

ընդգծելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիարժեք պաշտպանության և իրական սոցիալական ներառման հրամայականը:

Ժողովաժողով մշակվել և լույս է տեսել «Խթանել հաշմանդամություն ունեցող անձանց օրենսդրությանը Հայաստանում» Թրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի և «Մոբիլիթի ինթերնեշնլ ԱՄՆ»-ի (MIUSA) կողմից՝ ԱՄՆ միջազգային հարցերի ազգային դեմոկրատական ինստիտուտի աջակցությամբ:

Նախագծի աշխատակազմն իր խորին երախտագիտությունն է հայտնում ժողովաժողով ներկայացված բոլոր անձանց՝ իրենց պատմությունները, մտքերն ու մոտեցումները կիսելու ցանկության և պատրաստակամության համար:

# Բովանդակություն

<b>Աշոտ</b> Անգործունակություն	<b>7</b>
<b>Արշալույս Կարապետյան</b> Առողջապահության համակարգ. խուլ անձանց խնդիրներն ու մարտահրավերները	<b>9</b>
<b>Սիփան Ասատրյան</b> Տեղեկատվությունն իբրև իրավունք	<b>11</b>
<b>Վարդինե Գրիգորյան</b> Կրկնակի չներառում. հաշմանդամություն ունեցող կնոջ դիտանկյունը	<b>15</b>
<b>Վարդուհի Արամյան</b> Սպորտ, հանգիստ և ժամանց. հաշմանդամություն ունեցող անձանց ներառման մարտահրավերները	<b>19</b>
<b>Սևակ Սարգսյան</b> Չիրացված կրթության իրավունք	<b>23</b>
<b>Աննա (Իսկուհի) Ավետիսյան</b> Զբաղվածության ոլորտի մարտահրավերները	<b>25</b>
<b>Մուշեղ Հովսեփյան</b> Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու սոցիալական ներառումը. ներկայիս օրենսդրական	<b>27</b>



# Անգործունակություն

## Աշոտ, Սպիտակ Սպիտակի խնամքի տան բնակիչ

### (Աշոտը նախընտրեց չնշել իր ազգանունը և չիրապարակել իր լուսանկարը )

Ավելի քան երեսուն տարվա աշխատանքային ստաժ ունեմ: Աշխատել եմ Ռուսաստանում, Հայաստանում: Հայաստանում աշխատել եմ մոլիբդենի գործարանում: 2004 թ. ինձ գործունակությունից զրկեցին: Չնայած դրան, 2007-ին նորից նույն գործարանում եմ աշխատել: Սա

---

Բոլոր անձանց անունից, ում զրկել են գործունակությունից, մեկ ուղերձ կուզեի հղել հասարակությանը՝ եթե չեք կարող օգնել, մի խանգարեք:

Աշոտ

---

իբրև ապացույց, որ աշխատել կարող էի: Եվ շատ այլ բաներ կարող էի անել և հիմա էլ կկարողանայի, եթե անգործունակ ճանաչված չլիներ: Մարդուն անգործունակ ճանաչելը նույնն է, ինչ հասարակությունից կտրելը, բանկային բոլոր գործարքներ իրականացնելուց զրկելը, ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելուց զրկելը, ձայնի իրավունքից զրկելը, վարորդական իրավունքից զրկելը, ամուսնության իրավունքից զրկելը՝ բոլոր «մարդկային» իրավունքներից զրկելը: Ի հետևանք՝ անձը լիովին կախված է դառնում խնամակալից՝ երկրորդական մարդ է դառնում:

Մինչ [Սպիտակի] խնամքի տուն տեղափոխվելը Վարդենիսում էի [նկատի ունի Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատը]: Վարդենիսը պետության վերահսկողության տակ գտնվող փակ հաստատություն է: Վերաբերմունքն ու պայմաններն այնտեղ շատ վատն են. նորմալ մարդն այնտեղ գոյատևել չի կարող: Վարդենիսում պահվողներից շատերն էին անգործունակ ճանաչված: Շատերին անգործունակ ճանաչել էին պահանջել ընտանիքի անդամները կամ հարազատները՝ ընտանեկան տարբեր վիճաբանություններից հետո: Երբ ինձ անգործունակ են ճանաչել, ես անգամ մասնակից չեմ եղել դատական այդ նիստին: Սա խնդիր է: Կարևոր է, որ անձն ինքը մասնակցի այդ պրոցեսին, առանց իր ներկայության և մասնակցության նման որոշումներ չպետք է կայացվեն:

Այժմ իմ գործով դատարան հայց է ներկայացված: Հելսինկյան

քաղաքացիական ասամբլեայի [Վանաձորի գրասենյակի] փաստաբանի օգնությամբ պահանջում ենք վերականգնել իմ գործունակությունը:

Մեր հասարակությունում և միջավայրում հոգեկան առողջության խնդիր ունենալը խայտառակության պես մի բան է համարվում, կարծես մարդն ինքն է ցանկացել, կարծես արժանի է և պիտի խայտառակվի: Քեզ արդեն դադարում են մարդ համարելուց, մատնացույց են անում, կյանքի «հոսանքից» դուրս են գնում:

Ես ունեցել եմ շրջապատ, ունեցել եմ ընկերներ, բայց բոլորի հետ կապն արդեն կտրվել է: Վարդենիսում հայտնվել՝ նշանակում է վանդակի մեջ ընկնել, որտեղից չգիտես՝ դուրս կգամս, թե՞ ոչ: Խնամքի տուն տեղափոխվելն ինձ համար փրկություն էր: Ես արդեն անգամ դեղորայք չեմ ընդունում: Տան անդամների հետ մի ընտանիք ենք: Մեզանից շատերը նաև այստեղի համայնքի բնակիչների շրջանում ընկերներ ու շփումներ ունեն:


Եթե իմ դատական գործը հաջողվի, առաջին բանը, որ ուզում եմ անել, աշխատելն է, նորից մարդկանց հետ շփվելն ու ազատ լինելը:



# Առողջապահության համակարգ. խուլ անձանց խնդիրներն ու մարտահրավերները

## Արշալույս Կարապետյան, Գյումրի

**Ժեստերի լեզվից թարգմանեց  
Ռոզա Ավագյանը («Ագաթ»  
հաշմանդամություն ունեցող  
կանանց իրավունքների  
պաշտպանության կենտրոն»  
ՀԿ)**



Միշտ ապրել եմ Գյումրիում, բացի դպրոցական տարիներից, քանի որ խուլ անձանց համար նախատեսված միակ դպրոցը գտնվում է Երևանում: 8-րդ դասարանից դպրոցը չեմ շարունակել: Մեզ համար ստեղծված չեն պայմաններ, որպեսզի կարողանանք համալսարան ընդունվել, հետագայում աշխատել: Այնպես որ, շատերիս համար կրթությունն ավարտվում է դպրոցով:

Այժմ ամուսնացած եմ, երեխաներ ունեմ, երջանիկ եմ: Երեխաներս լսում են: Դեռ փոքր են, բայց արդեն փորձում են ինձ օգնել, թարգմանել ինձ համար:

Մեր համայնքի ներկայացուցիչների համար արտաքին աշխարհի հետ շփումներն անկախ կերպով իրականացնելը գրեթե անհնար է: Սա ամենամեծ խնդիրն է:

Հասարակությունում քեզ ոչ մի տեղ չեն հասկանում: Նաև՝ չեն ուզում հասկանալ: Անգամ երբ փորձում ես ինչ-որ բան գրելով բացատրել, հաճախ ագրեսիվ արձագանքի ես հանդիպում:

Բժշկական ծառայությունների կարիք ամենաշատ ունեի հղիության և երեխաներիս ծննդաբերության ժամանակ: Հիմնականում փորձում եմ

բժշկի չդիմել, քանի որ դժվար գործընթաց է ինձ համար. առողջապահությունն ինձ համար անմատչելի է: Բժշկի սկեսրոջս հետ եմ գնում, որպեսզի նա ինձ համար թարգմանի, բայց հաճախ նա էլ չի կարողանում խնդիրներս ներկայացնել այնպես, ինչպես կուզեի:

Ծննդաբերությունն ինձ համար շատ դժվար փորձառություն էր, հատկապես առաջինը: Ես չէի հասկանում, թե ոնց պետք է ծննդաբերել՝ ինչ պետք է անեմ, ինչպես պետք է ինքս ինձ և բալիկիս օգնեմ, ինչպես պետք է շնչեմ: Բժիշկները նախապես որևէ բան չէին բացատրել, ծննդաբերության ընթացքում էլ ինչը փորձում էին բացատրել, ես, բնականաբար, չէի հասկանում: Ուստի փորձում էի ինքս կողմնորոշվել, թե ինչ է պետք անել: Փառք Աստծո, ամեն ինչ լավ անցավ: Երկրորդ ծննդաբերությունն արդեն համեմատաբար ավելի հեշտ անցավ, քանի որ արդեն պատկերացում էի, թե ինչ է պետք անել: Գյումրիում չենք կարող անգամ լսողական սարք ստանալ՝ պետք է Երևան գնանք, որպեսզի այնտեղ ստանանք: Պետության կողմից տրամադրվող սարքերը, ի դեպ, այնքան անորակ են, որ երբ թույլ լսող անձինք փորձում են օգտագործել, ավելի շատ ամբողջ օրվա ընթացքում գլխացավ են ունենում, քան օգուտ ստանում:

Ամեն ինչը Երևանում է կենտրոնացված: Այնպես չէ, որ Երևանում էլ շատ հարմար և մատչելի է, բայց գոնե համեմատաբար հնարավորություններ կան: Երևանում գոնե թարգմանիչներ կան: Մեր համայնքում թարգմանիչները շատ քիչ են: Երբ շտապ թարգմանչի կարիք ենք ունենում, հաճախ չենք կարողանում գտնել՝ անգամ պատրաստ լինելով վճարել նրանց ծառայությունների դիմաց:

Ես ամեն տեղ սկեսրոջս հետ եմ գնում, որպեսզի նա ինձ համար թարգմանի՝ լինի խանութ, բանկ, հանրային որևէ վայր: Սկեսրոջս շատ շնորհակալ եմ օգնության համար, բայց խնդիրն այսպես չպետք է լուծվեր: Անգամ քաղաքապետարանում կամ պետական հաստատություններում ժեստերի լեզվով խոսողների համար որևէ մատչելիություն ապահովված չէ: Նույն խնդիրների բախվում եմ, երբ աղջկաս մանկապարտեզ եմ տանում: Շուտով դպրոց է գնալու, և այստեղ էլ եմ ստիպված լինելու շատ խնդիրների բախվել:

## Տեղեկատվությունն իրև իրավունք

### Սիփան Ասատրյան, Երևան

#### Բանասեր, տիֆլոմանկավարժ

Այսօր բոլորս ենք կախված տեղեկատվությունից՝ թե՛ հաշմանդամություն ունեցող, թե՛ հաշմանդամություն չունեցող անձինք:

Տեղեկատվությունը համարվում է 21-րդ դարի գլխավոր տարրերից մեկը:

Որպես չտեսող անձ՝ ես իմ տեղեկատվությունը հիմնականում ստանում եմ համացանցից և սոցիալական ցանցերից: Մեկ-մեկ նաև ռադիո եմ լսում: Իմ աշխատանքը հիմնականում կատարում եմ բանասիրական, լեզվաբանական ուղղվածությամբ՝ նյութեր եմ պատրաստում, հոդվածներ, լրատվական նյութեր, թարգմանություններ:

Նաև «Մենք» համացանցային ռադիոն ունենք, որը հաշմանդամություն ունեցող անձանց հարցերն է վերհանում:

Աշխատանքի կամ համալսարան գնալիս հաճախ մի քանի կանգառ ավելի եմ քայլում, որ մարդկանց աչքը սովորի չտեսող անձին ու իր ձեռնափայտին, որ ինձնից հետո եկող սերունդներն ավելի հեշտ անցնեն այն ճանապարհը, որն անցնում ենք հիմա մենք՝ հաշմանդամություն ունեցող անձինք, և նրանց համար ավելի հեշտ լինի զերծ մնալ այդ խտրական վերաբերմունքից, այդ տարօրինակ հայացքներից, որ այսօր մենք, ես ինքս, կրում եմ ինձ վրա: Սա անհատական առաքելություն, այսպես ասած՝ «միսիա» եմ համարում:

Փառք Աստծո, այսօր «խոսող» ծրագրեր ունենք, որոնք, իհարկե, Հայաստանում չեն մշակվել կամ ծրագրավորվել: Դրանցով մենք



ինտերնետից ենք փորձում տեղեկատվություն ստանալ: Ճիշտ է, կան կայքեր, որոնցում ուղղորդվելը շատ դժվար է: Մանավանդ այն կայքերը, որոնք շատ մեծ գրաֆիկական պատկերներ են ներառում: Այսինքն՝ որքան տեսնող մարդկանց համար է կայքը, այսպես ասած, կառուցվում, այնքան չտեսնողների համար դա բարդ է:

Ընդհանուր առմամբ, չլսող անձինք ավելի շատ են զրկված հաղորդակցման իրենց իրավունքը իրացնելու հնարավորությունից՝ սկսած հեռուստացույցից մինչև անգամ պետական մարմինների հետ հանդիպումներ ունենալը, քանզի ոչ ոք նրանց համար ժեստերի լեզվով թարգմանություն չի ապահովում:

Պետք է այնպիսի պետական քաղաքականություն մշակվի, որպեսզի բոլորին մատչելի լինի բոլոր ոլորտներին վերաբերող տեղեկատվությունը: Այդ իրավունքի չիրացումն ամեն ինչի վրա է ազդում: Ես, օրինակ՝ սովորելու տարիներին չէի կարողանում ռեալ կերպով մասնակցել դասերին, որովհետև հնարավորություն չունեի օգտվելու այն գրականությունից, որը դասախոսը տրամադրում էր մյուս ուսանողներին:

Հիմա հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության և հոգեբանության ամբիոնի ասպիրանտ եմ, բայց շատ բան չի փոխվել: Այսինքն՝ շատ ժամանակ շարունակում եմ դուրս մնալ դասապրոցեսից տեղեկատվության և գրքերի ոչ մատչելիության պատճառով: Այնինչ եթե ուսանող ես, դու պետք է լիարժեք կերպով իրացնես սովորելու քո իրավունքը:

Առօրյայիցս մեկ այլ օրինակ բերեմ. ավտոբուսային կանգառների խնդրին է վերաբերում: Պետության կողմից ընդամենը 28 ավտոբուս է ապահովված, որոնցում հայտարարվում է հաջորդ կանգառը: Բախտի բերմամբ, մի երկու անգամ հանդիպել եմ այդ ավտոբուսներին: Ավտոբուսների մեծ մասի պարագայում խնդիրն այն է, որ ես չեմ իմանում, թե ուր եմ հասել, չեմ իմանում՝ որ կանգառում եմ գտնվում, չեմ իմանում՝ որտեղ եմ գտնվում, այսինքն՝ պիտի հարցնեմ կողքիններիս: Դրա համար շատ հաճախ տրանսպորտ եմ փոխում, մետրոյով եմ գալիս գործի, ինչ է թե վայելեմ հաջորդ կանգառի մասին տեղեկությունը բարձրաձայն լսելու բերկրանքը, ինձ ռեալ քաղաքացի զգամ գոնե մի 10 րոպեով: Այ այսպիսի ծայրահեղ կյանքով ենք ապրում (ծիծաղում է):

Ներկայիս օրինագիծը [«Հաշմանդամություն ունեցող անձանց իրա-

վունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը] ունի դրույթներ տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության վերաբերյալ: Անկեղծ ասած, օրինագիծը համարում եմ ընդամենը խոստումների դաշտում գտնվող մի փաստաթուղթ, որը կրկին խոստումներ է տալիս հաշմանդամություն ունեցող անձին, բայց ոչ ռեալ լուծումներ, ռեալ մեխանիզմներ, որպեսզի ինքներս մեզ ռեալ քաղաքացի զգանք:

Ես շատ կուզենայի, որ պետությունը իրոք հետաքրքրված լիներ օրենքներ ընդունելիս և ոչ թե դա աներ պարզապես և ի միջի այլոց: Հաշմանդամություն ունեցող անձանցից շատերի համար անգամ ամենաբազային տեղեկատվական և հաղորդակցման կարիքների բավարարման հնարավորությունները որևէ կերպ պետության կողմից ապահովված չեն: Տեղեկատվություն ստանալը, հաղորդակցվելը իրավունքներ են, և մենք մեր այդ իրավունքները շարունակաբար չենք իրացնում:



## Կրկնակի ջնեռառում. հաշմանդամություն ունեցող կնոջ դիտանկյունը

### Վարդինե Գրիգորյան, Վանաձոր

#### Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա

Հայաստանում բոլոր կանայք բախվում են անկախ և ինքնուրույն որոշում կայացնելու սահմանափակումների, իսկ հաշմանդամություն ունեցող կանանց պարագայում սահմանափակումներն էլ ավելի ընդգծված են:

Նման սահմանափակումների հետ բախումը սկսվում է ամենավաղ տարիքից: Հավանականությունը, որ հաշմանդամություն ունեցող աղջրկան կթողնեն հաստատությունում, ավելի մեծ է, քան տղա երեխայի պարագայում: Պատճառը գենդերային դերերի վերաբերյալ կարծրատիպային, խտրական այն պատկերացումներն են, ըստ որոնց

կնոջ միակ ու հիմնական առաքելությունը երեխա ունենալն է, իսկ հաշմանդամություն ունեցող աղջկա պարագայում ենթադրվում է, որ վերարտադրողական ֆունկցիան չի իրականացվի: Շատ կոպիտ ասած՝ հաշմանդամություն ունեցող կանայք հասարակության կողմից իբրև «չստացված ինկուբատոր» են դիտվում, չեն համապատասխանում դրված «պիտանելիության չափանիշներին»:



---

Ինձ՝ իբրև հաշմանդամություն ունեցող կնոջ համար սոցիալական ներառման նախապայմանը, իմ իրավունքների համալիր պաշտպանության նախապայմանը հենց այն է, որ ցանկացած օրենքի շրջանակներում հասարակության յուրաքանչյուր խմբի իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրագրվեն և ապահովվեն:

---

Սահմանափակումների շարքն այնուհետ անցնում է կյանքի հաջորդ փուլեր՝ կրթություն, զբաղվածություն, հասարակական կյանքում մասնակցություն, քաղաքական կյանքում մասնակցություն:

Անկախ աշխատանքի բովանդակությունից, կարծրատիպացված հասարակությունը պահանջում է կնոջից «բարետեսություն», և հաշմանդամություն ունեցող կանայք պարտադրվող այս չափանիշներին հաճախ չեն համապատասխանում, ուստի աշխատանքի հեռանկարներ չկան: Իսկ եթե չկան աշխատանքի հեռանկարներ, ուրեմն չարժի նաև կրթության մասին մտածել: Այսինքն՝ ինքնուրույնության ամբողջ շղթան փակվում է ու վերացվում ի սկզբանե՝ պետության կողմից, հասարակության կողմից, ընտանիքի կողմից, և դա լեզվիտիմ է դիտարկվում:

Այն գործողությունները, որոնք այս պահին իրականացվում են պետության կողմից, շատ ուշացած են: Ես չեմ զգացել պետության պատրաստակամությունը՝ հաշվի առնելու հաշմանդամություն ունեցող կանանց կարիքները:

Պետության կողմից դեռևս շատ լուրջ աշխատանք պետք է կատարվի՝ ճանաչելու հաշմանդամություն ունեցող կանանց՝ որպես իրավունքների կրող և գործնականում ապահովելու այդ իրավունքների պաշտպանությունը:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ներկայիս օրենքի նախագիծը պաշտպանական մեխանիզմների առումով թույլ է:

Իբրև օրենքի շրջանակներում տարվող պետական քաղաքականության սկզբունք ճանաչվում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, ինչը դրական է, այնուամենայնիվ, նախագծում որևէ կերպ արտացոլված չեն հաշմանդամություն ունեցող կանանց կարիքները:

Սակայն, մյուս կողմից, ես չեմ համարում, որ մեկ առանձին օրենքով պետք է կարգավորվեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հետ առնչվող բոլոր խնդիրները:

Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքներն ու կարիքները պետք է ճանաչվեն դեռևս 2013 թ. ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով: Համապատասխան կարգա-



վորումներ պետք է նաև տեղ գտնեին 2017-ին ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի շրջանակներում:

Բռնությունը հաշմանդամություն ունեցող կանանց կյանքում լրջագույն խնդիրներից է, քանի որ նրանք հաճախ չունեն որևէ հնարավորություն կոտրելու բռնության շղթան, չունեն ելք բռնության շղթայից. գտնվում են փակ հաստատությունում կամ ընտանիքում, որից դուրս չեն կարող գալ: Եվ սա սարսափելի է:

Պետության կողմից հաշմանդամություն ունեցող կնոջը պետք է տրվեն բոլոր իրական հնարավորությունները «ազատվելու» բռնարարներից, միաժամանակ հնարավորություն տրվի ինքնուրույն լինելու, աշխատելու, սեփական կյանքը ինքնուրույն և անկախ կառուցելու:

Այս ամենի համար պայմաններ բացարձակապես ստեղծված չեն: Նման պայմաններ, մեծ հաշվով, ստեղծված չեն առհասարակ Հայաստանում բռնության ենթարկվող, բռնություն վերապրած կնոջ համար, իսկ հաշմանդամություն ունեցող կինը պետության կողմից հավելյալ աջակցության կարիք ունի:

Ես սիրում եմ ամեն ինչին նայել արժանապատվության տեսանկյունից: Սա է այն տեսանկյունը, որից պետությունը պետք է «նայի» իր քաղաքացուն: Եվ եթե այդ տեսանկյունից նայես, կհասկանաս, որ միջավայրում, հասարակական կյանքի կազմակերպման համակարգում շատ բան անարժանապատիվ է, անհարմար, արհեստականորեն դժվարացված: Պետությունը պարտավոր է անել այն ամենը, ինչը յուրաքանչյուրիս հնարավորություն կտա մեզ լիարժեք քաղաքացի զգալու, արժանապատիվ ապրելու, այլ ոչ թե գոյատևելու:



## Սպորտ, հանգիստ և ժամանց. հաշմանդամություն ունեցող անձանց ներառման մարտահրավերները

### Վարդուհի Արամյան, Երևան

#### Հաշմանդամային սպորտի հայկական ազգային ֆեդերացիա

Հայաստանում լուրջ և համակարգային խնդիրներ կան՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց հանգստի և ժամանցի կազմակերպման, սպորտային կյանքում նրանց մասնակցության հնարավորությունների հետ:

Հասարակությունում արմատացած մոտեցում կա, որ սպորտը պետք է հաշմանդամություն ունեցող անձին միայն վերականգնման՝ ռեաբիլիտացիայի համար: Եթե անձն իր ֆիզիկական վիճակով տարբերվում է մյուսներից՝ ընդունված նորմերից, ուրեմն պիտի ամեն ինչ անի, որ «վերականգնվի», փոխվի ու նմանվի մյուսներին:

Մտածելակերպային և կարծրատիպային խնդիրների հետ մեկտեղ ունենք նաև զգալի միջավայրային խոչընդոտներ, ռեսուրսների բացակայություն, պետական քաղաքականության բացթողումներ:

Մինչ վերջերս մեր երկրում չկար հաշմանդամային սպորտի զարգացման պետական հայեցակարգ: Այսինքն՝ որևէ տեղ չունեինք ամրագրված, թե հաշմանդամային սպորտն ինչ է, ինչի համար է, ում



---

Սպորտում դու սովորում ես պայքարել: Սպորտում դու սովորում ես հաղթելու պարտվել, ու այս ամենն անում ես արժանապատվորեն: Սրանք են սպորտային կյանքում մասնակցության կարևորագույն ազդեցությունները:

Վ. Արամյան

---

համար է, ով է դրանով զբաղվում, ով է դրա պատասխանատուն, ինչ օրենքներով է կարգավորվում, ինչ զարգացում պիտի ունենա, ինչ միջոցներով պիտի ապահովվի այդ զարգացումը:

2017 թ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ձեռնամուխ եղավ ՀՀ-ում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգի մշակմանը: Արդեն իսկ ընդունված հայեցակարգը գործնականում քիչ բան է փոխում՝ պետական քաղաքականությունը շարունակում է չխթանել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը սպորտային կյանքում:

Սպորտային կյանքում մասնակցության մասին է խոսվում նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց սոցիալական ներառման մասին» օրենքի նախագծում: Նախագծում տեղ գտած ձևակերպումները, կարելի է ասել, համապատասխանում են ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ձևակերպումներին՝ 30-րդ հոդվածի շրջանակներում: Սակայն կոնվենցիայով պահանջվում է, որ պետությունը խրախուսի, խթանի, ապահովի բոլոր մակարդակներում անցկացվող սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը: Օրենքի նախագծում նման շեշտադրումները բացակայում են: Պետությունը դեռ չունի տվյալ խնդրի լուծմանն ուղղված համակարգային մոտեցում: Փոխարենը՝ սահմանափակվում է էպիզոդիկ գործողություններով՝ միջոցառումից միջոցառում, փառատոնից փառատոն:

Պետության կողմից հանգստի և ժամանցի կազմակերպումը պետք է կարևորվի հաշմանդամություն ունեցող երեխաների կյանքում ամենավաղ տարիքից: Պետական քաղաքականությունը պետք է թիրախավորի դպրոցը, մանկապատանեկան մարզակումբները, համայնքային մակարդակներում սպորտի և հանգստի հնարավորությունների զարգացումը: Այս առումով մեծ դերակատարում պետք է ունենան ֆիզիկական կուլտուրա առարկայի դասերը:

Ֆիզիկական կուլտուրայի դասերը չեն կարևորվում հաշմանդամություն ունեցող աշակերտի կրթական պրոցեսում, հաշմանդամություն ունեցող երեխաները հիմնականում պարզապես չեն մասնակցում այս դասաժամերին, իսկ ԱՌԻՊ-ներում (անհատական ուսուցման պլան) շեշտադրում չի արվում, թե հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր երեխայի ֆիզկուլտուրայի դասը կազմակերպելու նպատակով ինչ գործողություններ պետք է արվեն և ինչպես:

Դպրոցից դուրս, տարբեր ենթակայության մանկապատանեկան մարզադպրոցները ևս բաց չեն հաշմանդամություն ունեցող երեխա-

ների համար: Հայաստանի Հանրապետությունում կա 165 մարզադըպ-  
րոց, սակայն դրանցից ոչ մեկում հաշմանդամություն ունեցող երեխա-  
ներ ներգրավված չեն:

Խնդրահարույց է նաև ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական  
ինստիտուտ ընդունվելու կարգը, որը, ոտնահարելով հաշմանդամությո-  
ւն ունեցող անձի իրավունքները, բացառում է նրա՝ տվյալ բուհ դիմելու  
և բուհում ուսումնառելու հնարավորությունը: Այս բուհն իր տեսակի մեջ  
միակն է Հայաստանում: Խնդիրն այս առկա է դեռ 90-ականներից: Բու-  
հը փակ է անգամ պարալիմպիկ խաղերին մասնակցած մարզիկների  
համար:

Այսպիսով, հաշմանդամային սպորտը թե՛ կազմակերպչական, թե՛  
բովանդակային առումով Հայաստանում զարգացում չի ապրում:  
Փոփոխություններ անհրաժեշտ են բոլոր օղակներում և մակարդակ-  
ներում, և հենց այս տեսլականով պետք է մշակվի պետական քաղաքա-  
կանությունը: Ներկայիս օրենքի նախագիծը, հետագա իրավակիրառ  
պրակտիկան, ենթաօրենսդրական ակտերի մշակումը ևս պետք է  
միտված լինեն համակարգային փոփոխություններ իրականացնելուն:  
Մինչդեռ ներկայումս պատկան մարմինները հաշմանդամային  
սպորտի զարգացման իմիտացիա են անում: Պետությունը պետք է  
յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձին տա մարզական  
կյանքին մասնակցելու, սեփական ժամանցն ու հանգիստը  
կազմակերպելու իրական հնարավորություններ: Սրա համար պետք են  
քաղաքական կամք, ուշադրություն, հստակ գործողությունների  
սահմանում և ռեսուրսներ:



## Չիրացված կրթության իրավունք

### Սևակ Սարգսյան, Գյումրի

**«Էմիլի Արեգակ» բազմակի  
հաշմանդամություն ունեցող  
երեխաների և երիտասարդների  
կենտրոնի սան**



Ես Սևակն եմ, նկարչություն եմ սիրում: Նախօրոք ասեմ, որ դպրոցի մասին խոսել չեմ սիրում: Մինչև դպրոց գնալը՝ 12 տարեկանը, տանն եմ սովորել, տնային ուսուցում էր: Դասատուն մեր տուն էր գալիս, հարցեր էր տալիս, պատասխանում էի, գիրքը բացում էր, ու միասին սովորում էինք: Հետո որոշ ժամանակ դադար տվեցինք: Հետո սկսեցի դպրոց գնալ:

Հիմա 14 տարեկան եմ, համար 39 դպրոցն եմ գնում: Դպրոցի առարկաներից ամենաշատը տեխնոլոգիան եմ սիրում: Դպրոց նոր եմ սկսել հաճախել ու դեռ չգիտեմ՝ ինչ է սպասում ինձ այնտեղ:

Դպրոցում հարմարություններ չկան: Սայլակով պիտի դպրոց գնամ, ու ինձ համար շատ անհարմար է: Երեխաները հետս շփվում են, ամեն ինչ նորմալ է: Ծնողներս չեն կարող ինձ ավելի հեշտ տարբերակով տանել դպրոց: Հայրիկիս համար դժվար է ինձ դպրոց տանելը՝ ես ծանր եմ, բայց տանում են:

Հիմա դադար եմ տվել՝ այդքան հաճախ չեմ գնում դպրոց, ավելի շատ սիրում եմ տանը մնալ, նկարել, հեռուստացույց նայել: Բոքս էլ եմ շատ սիրում: Կուզենայի բոքսի գնալ, բայց չեմ կարող: Ինձ մի քիչ դժվար կլիներ:

Դասընկերները լավ բան են, բայց դպրոցն այդքան էլ չեմ սիրում: Ես

ընկերների հետ էլ սեր չունեն: Դպրոցում պիտի նենց լիներ, որ ես ինձ  
լավ զգայի, հարմար լիներ:

Մի ընկեր ունեի՝ Դավիթը, մոտ ընկերս է, հիմա ուրիշ երկրում է ապրում:  
Դե, հասկանում ենք՝ այստեղ ավելի դժվար է: Դավիթի բուժման համար  
են գնացել: Այնտեղ ավելի հարմար է սայլակով դրսում շրջագայել՝  
երկիրը տեսնել, տարբեր բաներ տեսնել:

Կուզենայի, որ կյանքումս ինչ-որ բան փոխվեր, փոփոխություն լիներ:



## Զբաղվածության ուղորտի մարտահրավերները

### Աննա (Իսկուհի) Ավետիսյան, Երևան

#### Իրավաբան

Ես Աննան եմ, սովորել եմ Հայաստանում ֆրանսիական համալսարանում՝ իրավաբանական ֆակուլտետում, ունեմ բակալավրի աստիճան: 2014-ին ավարտել եմ համալսարանն ու այդ ժամանակից ի վեր աշխատանք եմ փնտրում: Զբաղվածության թեման ինձ համար այս պահին շատ ակտուալ է:

Աշխատանքի իրավունքի իրացումը մարդու՝ արժանապատիվ կյանքով ապրելու նախապայմաններից է: Բացի ֆինանսականից, աշխատանքն ունի նաև սոցիալական մեծ նշանակություն՝ հնարավորություն է տալիս ապրել անկախ կյանքով, բարձրացնում է անձի ինքնագնահատականը:

Վաղուց արդեն ժամանակն է, որ Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձինք լիարժեք իրացնեն աշխատանքի իրենց իրավունքը, ունենան բոլոր համապատասխան հնարավորությունները. սա մեր պայքարի ամենահիմնաքարային հարցերից է: Հաշմանդամություն ունեցող անձինք աշխատաշուկայում մի շարք



Հաշմանդամություն ունեցող անձին աշխատանքի ընդունելը հաճախ վախ է առաջացնում գործատուների մոտ: Ուստի ուղերձս նրանց կլինեմ, որ չվախենան: Սա երկուստեք գործընթաց է, երկկողմանի ճանապարհ է, որը կարող ենք անցնել՝ միմյանց կարիքները հասկանալով, միմյանց իրավունքները հարգելով, միմյանց ընդունելով:

Ա. Ավետիսյան

մարտահրավերների են բախվում. դեռևս շատ կարծրատիպեր կան, որոնք պետք է կոտրվեն: Այդ անձինք պետք է իրենց աշխատանքային իրավունքներն իրացնեն, որպեսզի իրենց ձայնն ավելի լսելի դառնա: Մենք պետք է ներգրավված լինենք որոշումների կայացման գործընթացում: Մենք պետք է մեր խնդիրների լուծման առաջնագծում լինենք:

Որպեսզի գործատուն աշխատանքի ընդունի հաշմանդամություն ունեցող անձի, նա պարտավոր է մաքսիմալ հարմարեցումներ կատարել աշխատավայրում, և հենց այս առումով են մարտահրավերները բավականին շատ: Պատահում է՝ գնում են հարցազրույցի, գործատուն ասում է՝ «դե դու հասկանում ես, որ համապատասխանում է քո որակավորումը, ամեն ինչ մեզ դուր է գալիս, բայց շենքը մատչելի չի: Այսինքն՝ մենք քեզ որ ընդունենք, ղեկ են գալու աշխատանքի»:

Նման հարցերը սովորաբար այդպես էլ անպատասխան են մնում: Իսկ պետության հիմնական դիրքորոշումն է՝ «միջավայրը հարմարեցնելու համար միջոցներ են պետք, մենք միջոցներ չունենք»: Պետության կողմից չի վարվում այնպիսի քաղաքականություն, որի շրջանակներում գործատուներն իրենց պարտավորությունները կիրականացնեն: Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցը մնում է չկարգավորված և չկարևորված:

# Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու սոցիալական ներառումը. ներկայիս օրենսդրական գործընթացների ակնարկ

## Մուշեղ Հովսեփյան, Երևան

### Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին խոսելիս խնդիրները հիմնականում դիտարկում ենք խմբի համատեքստում, խոսում ենք խմբի մասին, այլ ոչ անհատների:

Մինչդեռ անհատի դժվարություններն այլ են, քան խմբինը: Այս կերպ կորչում են մարդկանց անհատական պատմություններն ու անհատական դժվարությունները, և պետական քաղաքականությունն արդյունքում ուղղված է լինում խմբին, այլ ոչ թե կոնկրետ անհատին:

Պետական քաղաքականության իրականացման առումով նախ պետք է հստակեցումներ տեղի ունենան՝ արդյոք որպես սկզբունքների շտեմարան ընդունում ենք ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, թե՞ մեկ այլ երկրի փորձ:

Ես չգիտեմ այնպիսի երկիր, որտեղ տիրող իրավիճակը լիարժեք կերպով համապատասխանում է Կոնվենցիայի կողմից առաջ քաշված սկզբունքներին և հաշմանդամության մարդու իրավունքների մոդելին: Զարգացման համար այս պահին մեր ունեցած լավագույն աղբյուրը Կոնվենցիան է:



---

Ինչքան բաց ես իբրև հասարակություն, այնքան բազմազանությունը երևում է, և այդ բազմազանությունն է թուփեղ կողմը, այլ ոչ թե թուփատարությունը:

---

Կոնվենցիայի վավերացումից ի վեր Հայաստանում առկա էր օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն:

Սա այն Կոնվենցիան է, որը նախատեսում է մշակութային փոփոխություն հասարակությունում, ինչը հնարավոր չի իրականացնել մեկ իրավական ակտի միջոցով, ինչպիսին, օրինակ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց սոցիալական ներառման մասին» օրենքի նախագիծն է: Նախագծի շուրջ աշխատանքները ընթանում են արդեն գրեթե 10 տարի, և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները տևականորեն, կարելի է ասել, պայքարել են, որ նախագիծն հնարավորինս համապատասխանի կոնվենցիային:

Տվյալ նախագծից խոսելիս կարևոր է այն դիտարկել ընդհանուր քաղաքական համակարգի կոնտեքստում: Իբրև գործիք տվյալ օրենսդրական նախագիծը լրիվ տեղավորվում է պետական այն քաղաքականության շրջանակում, երբ խնդիրների առարկայական լուծման կամքը շատ թույլ է դրսևորված:

Նախագծում տրվող հաշմանդամության սահմանումը չի համապատասխանում կոնվենցիայի սահմանմանը: Նախագծով որդեգրվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաշմանդամության սահմանումը, ինչն ավելի շատ, բնականաբար, ենթադրում է՝ շեշտադրում եմ կատարում մարդու անհատական և առողջական գործոնների վրա:

Նախագիծը թույլ է մեխանիզմների առումով: Կարևորում եմ նշել *actio popularis* բողոքների մեխանիզմի տրամադրման բացակայության խնդրի մասին: Տվյալ մեխանիզմի առկայության պարագայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները կկարողանային մեծ առաջընթաց գրանցել: Նախագիծն արդեն կծառայեր իբրև հաշմանդամություն ունեցող անձանց ձայնը դատարաններում լսելի դարձնելու գործիք:

Նախագծի դրական կողմերից, որոշ վերապահումներով, կարելի է նշել այն, որ նախագծով տրվում է հաշմանդամության հիմքով խտրականության սահմանումը, ինչպես նաև խելամիտ հարմարեցումների տրամադրման մերժումը ըստ նախագծի համարվում է խտրականություն: Նախագիծը նաև նախատեսում է, որ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը կունենա մոնիթորինգի ազգային մեխանիզմի կարգավիճակ:

Ընդհանուր առմամբ, շատ բան կախված է լինելու ենթաօրենսդրական ակտերի մշակումից և ընդհանուր պետական քաղաքականության

ուղղվածությունից: Արդյունավետ քաղաքականության մշակման համար նախ պետք է ունենալ տվյալներ՝ ապախոջորացված տվյալներ, որոնք մեզ հնարավորություն կտան հասկանալու խմբերի ու անհատների կարիքներն ու ըստ այդմ՝ առաջնահերթությունները: Բացի այդ, պետության կողմից պետք է որդեգրված լինի հստակ արժե-համակարգ, սկզբունքներ, որոնք պետք է բխեն կոնվենցիայից: Կոն-վենցիան ամրագրում է մի շարք կարևորագույն սկզբունքներ, ինչպես, օրինակ՝ մասնակցայնության սկզբունքը կամ մարդկային բազմա-զանության նկատմամբ հարգանքը և հաշմանդամությունը դիտարկելը իբրև մարդկային բազմազանության տեսակ և ոչ թե որպես բժշկական ինչ-որ իրավիճակ: Շատ կարևոր է, որ մարդու մասնակցությունը, խոս-քը, անձնական պատմությունը բերվեն հաշմանդամության ոլորտ: Ինչպես ասում են՝ անձնականը քաղաքական է:

Կոնվենցիան վավերացնելով՝ Հայաստանի Հանրապետությունը փաս-տորեն համաձայնել է այդ սկզբունքները որդեգրել և տեղայնացնել:

Պետության կողմից պետք է ստեղծվեն բոլոր նպաստավոր պայման-ները, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդիկ խոսեն իրենց փորձառությունից և լինեն իրապես ներառված հասարակությունում, այլ ոչ զուտ ինտեգրված:



# Նշումների համար

